# «ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԻԱՅՆԱԿ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# Ն ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5-Ե-2-ՏՊ-1

ք. Երևան «27» ապրիլի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**2.5 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան**

Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 702904.40 (Յոթ հարյուր երկու հազար ինը հարյուր չորս դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ |
| ք. Երևան Կառավարական տուն 3 | ՀՀ, ք. Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2 |
| ՀՎՀՀ՝ 01506515 | ՀՎՀՀ՝ 01222567 |
| «Հայէկոնոմ բանկ» ՓԲԸ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 163008102713 | Հ/Հ 1570005065330100 |
| Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան | Տնօրեն .....Ա. Ա[illegible] |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
«27» ապրիլի 2018թ. Կնքված
N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5-Ե-2-ՏՊ-1» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների գլխավոր նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը* |
| 2 | 33621270 | Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում 1, Վալիդոլ դ/հ 60մգ N10 | Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, Բորիսպ Ուկրաինա | մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում menthol solution in menthyl isovalerateդեղահատեր ենթալեզվային60մգ.բլիստերում (6, 10) | դեղահատ | 8.23 | 37035.00 | 4500 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 4500 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 3 | 33621270 | Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում 2, Վալիդոլ դ/պ 100մգ N50 | Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, Բելոռուս | մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում դեղապատիճներ ենթալեզվային 100մգ; (50/5x10/) բլիստերում | դեղապատիճ | 16.00 | 73600.00 | 4600 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 4600 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 5 | 33691219 | Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիում ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ), Ասպարկամ դ/հ N50 | Զդորովյե Դեղագործական Ընկերություն ՍՊԸ Ուկրաինա | մագնեզիումի ասպարագինատի տետրահիդրատ, կալիումի ասպարագինատի հեմիհիդրատ magnesium asparaginate tetrahydrate, potassium asparaginate hemihydrateդեղահատեր175մգ+175մգ, բլիստերում (50/5x10/, 50/1x50/) | դեղահատ | 4.29 | 13942.50 | 3250 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 3250 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 6 | 33691220 | Ինոզին, Ռիբոքսին դ/հ N50 | Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, Բելոռուս | ինոզին դեղահատեր թաղանթապատ 200մգ; (50/5x10/) բլիստերում | դեղահատ | 5.20 | 23400.00 | 4500 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 4500 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 11 | 33691212 | Դիոսմին, հեսպերիդին, Դետրալեքս դ/հ N60 | Լես Լաբորատոիրես Սերվիե Ինդուստրի, Ֆրանսիա | դիոսմին, հեսպերիդին diosmin, esperidinդեղահատեր թաղանթապատ450մգ+50մգ, բլիստերում (30/2x15/, 36/3x12/, 60/4x15/) | դեղահատ | 98.00 | 47040.00 | 480 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 480 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 15 | 33631400 | Կալցիում D3 ծամելու դ/հ 500մգ/200ՄՄ N100 | Տակեդա Նիկոմեդ ԱՍ, Նորվեգիա | կալցիում(կալցիում կարբոնատ), խոլեկալցիֆերոլ calcium (calcium carbonate), cholecalciferol դեղահատեր ծամելու, նարնջի համով500մգ+5.5մկգ (200ՄՄ),պլաստիկե տարայում (20, 50, 100) | դեղահատ | 40.00 | 16000.00 | 400 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 400 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 16 | 33691191 | Նիտրոքսոլին թ/պ դ/հ 50մգ N50 | Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան ԲԸ,Ռուսաստան | նիտրոքսոլին nitroxolineդեղահատեր թաղանթապատ50մգ,բլիստերում (50/5x10/) | դեղահատ | 10.00 | 15000.00 | 1500 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 1500 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 17 | 33691191 | Պիրացետամ, Լուցետամ թ/պ դ/հ 800մգ N30 | Էգիս Ֆարմայուտիկալս ՓԲԸ, Հունգարիա | պիրացետամ դեղահատեր թաղանթապատ 800մգ; (30) ապակե տարայում | դեղահատ | 52.90 | 63480.00 | 1200 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 1200 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 33691191 | Պիրացետամ, ցինարիզին, Օմարոն դ/հ N°90 | Նիժֆարմ ԲԸ, Ռուսաստան | պիրացետամ, ցինարիզինpiracetam, cinnarizineդեղահատեր400մգ+25մգ, բլիստերում ( 90/9x10/) | դեղահատ | 29.21 | 212940.90 | 7290 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 7290 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 94 | 33622800 | Հիդրոքլորոթիազիդ դ/հ 25մգ N°20 | "Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան "ԲԲԸ, Բելոռուս | հիդրոքլորոթիազիդ դեղահատեր 25մգ; (20/2x10/) բլիստերում | դեղահատ | 11.21 | 89680.00 | 8000 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 8000 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 96 | 33621710 | Նիֆեդիպին դրաժե 10մգ N°50 | Տեխնոլոգ ՓԲԸ, Ուկրաինա | նիֆեդիպին դեղահատեր թաղանթապատ 10մգ; (50/5x10/) բլիստերում | դեղահատ | 13.89 | 62505.00 | 4500 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 4500 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 97 | 33671130 | Դիկլոֆենակ ամպ. 25մգ/մլ 3մլ N°5 | Հեմոֆարմ Ա.Դ., Սերբիա | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) diclofenac (diclofenac sodium)լուծույթ մ/մ ներարկման25մգ/մլ,3մլ ամպուլներ(5) | սրվակ | 80.00 | 1600.00 | 20 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 20 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 102 | 33617200 | Լևոթիրոքսինի նատրիում, Լ-թիրոքսին-50 դ/հ 50մգ N°50 | Բեռլին-Քեմի ԱԳ, Գերմանիա | լևոթիրոքսին (լևոթիրոքսին նատրիում)levothyroxine (levothyroxine sodium)դեղահատեր50մկգ,բլիստերում (25/1x25/, 50/2x25/, 100/4x25/) | դեղահատ | 19.03 | 13321.00 | 700 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 700 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 104 | 33651157 | Ցեֆտրիաքսոն ն/ե և մ/մ սրվ. 1գ | «Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան Բելոռուս | ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում)ceftriaxone (ceftriaxone sodium)դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի1գ, ապակե սրվակ (1, 10) | սրվակ | 147.00 | 4410.00 | 30 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 30 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 107 | 33661121 | Ացետիլսալիցիլաթթու դ/հ 0.5գ N°10 | Իրբիտսկի Քիմիադեղագործա-կան գործարան ԲԸ,Ռուսաստան | ացետիլսալիցիլա-թթուacetylsalicylic acidդեղահատեր500մգ, բլիստերում (10) | դեղահատ | 4.50 | 12150.00 | 2700 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 2700 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 108 | 33661121 | Պարացետամոլ դ/հ 0,5գ N°10 | Իրբիտսկի Քիմիադեղագործա-կան գործարան ԲԸ,Ռուսաստան | պարացետամոլparacetamolդեղահատեր500մգ.բլիստերում (10) | դեղահատ | 4.20 | 16800.00 | 4000 | ք. Երևան, Մարգարյան փ. 35 | 4000 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| **Ընդամենը** | | | | | | | **702904.40** | | | | |

* *Գնման ժամանակացույցում նշված են առավելագույն քանակները: Քանակները կարող են փոփոխվել շահառուների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ

Տնօրեն ..... Ա. Ասատրյան

/ստորագրություն/

Կ.Տ

01222567 «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» "НАТАЛИ ФАРМ" "NATALI FARM"

Հավելված N 2
«27» ապրիլի 2018թ. Կնքված
N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5-Ե-2-ՏՊ-1» ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 33621270 | Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում 1, Վալիդոլ դ/հ 60մգ N10 | | | | | 11110.50 | 14814.00 | 18517.50 | 22221.00 | 25924.50 | 29628.00 | 33331.50 | 37035.00 | 37035.00 |
| 3 | 33621270 | Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում 2, Վալիդոլ դ/պ 100մգ N50 | | | | | 22080.00 | 29440.00 | 36800.00 | 44160.00 | 51520.00 | 58880.00 | 66240.00 | 73600.00 | 73600.00 |
| 5 | 33691219 | Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիում ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ), Ասպարկամ դ/հ N50 | | | | | 4182.75 | 5577.00 | 6971.25 | 8365.50 | 9759.75 | 11154.00 | 12548.25 | 13942.50 | 13942.50 |
| 6 | 33691220 | Ինոզին, Ռիբոքսին դ/հ N50 | | | | | 7020.00 | 9360.00 | 11700.00 | 14040.00 | 16380.00 | 18720.00 | 21060.00 | 23400.00 | 23400.00 |
| 11 | 33691212 | Դիոսմին, հեսպերիդին, Դետրալեքս դ/հ N60 | | | | | 14112.00 | 18816.00 | 23520.00 | 28224.00 | 32928.00 | 37632.00 | 42336.00 | 47040.00 | 47040.00 |
| 15 | 33631400 | Կալցիում D3 ծամելու դ/հ 500մգ/200ՄՄ N100 | | | | | 4800.00 | 6400.00 | 8000.00 | 9600.00 | 11200.00 | 12800.00 | 14400.00 | 16000.00 | 16000.00 |
| 16 | 33691191 | Նիտրոքսոլին թ/պ դ/հ 50մգ N50 | | | | | 4500.00 | 6000.00 | 7500.00 | 9000.00 | 10500.00 | 12000.00 | 13500.00 | 15000.00 | 15000.00 |
| 17 | 33691191 | Պիրացետամ, Լուցետամ թ/պ դ/հ 800մգ N30 | | | | | 19044.00 | 25392.00 | 31740.00 | 38088.00 | 44436.00 | 50784.00 | 57132.00 | 63480.00 | 63480.00 |
| 19 | 33691191 | Պիրացետամ, ցինարիզին, Օմարոն դ/հ N90 | | | | | 63882.27 | 85176.36 | 106470.45 | 127764.54 | 149058.63 | 170352.72 | 191646.81 | 212940.90 | 212940.90 |
| 94 | 33622800 | Հիդրոքլորոթիազիդ դ/հ 25մգ N20 | | | | | 26904.00 | 35872.00 | 44840.00 | 53808.00 | 62776.00 | 71744.00 | 80712.00 | 89680.00 | 89680.00 |
| 96 | 33621710 | Նիֆեդիպին դրաժե 10մգ N50 | | | | | 18751.50 | 25002.00 | 31252.50 | 37503.00 | 43753.50 | 50004.00 | 56254.50 | 62505.00 | 62505.00 |
| 97 | 33671130 | Դիկլոֆենակ ամպ. 25մգ/մլ 3մլ N5 | | | | | 480.00 | 640.00 | 800.00 | 960.00 | 1120.00 | 1280.00 | 1440.00 | 1600.00 | 1600.00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 102 | 33617200 | Լևոթիրոքսինի նատրիում. Լ-թիրոքսին-50 դ/հ 50մգ №50 | | | | | 3996.30 | 5328.40 | 6660.50 | 7992.60 | 9324.70 | 10656.80 | 11988.90 | 13321.00 | 13321.00 |
| 104 | 33651157 | Տեֆտրիաքսոն ն/ե և մ/մ սրվ. 1գ | | | | | 1323.00 | 1764.00 | 2205.00 | 2646.00 | 3087.00 | 3528.00 | 3969.00 | 4410.00 | 4410.00 |
| 107 | 33661121 | Ացետիլսալիցիլաթթու դ/հ 0.5գ №10 | | | | | 3645.00 | 4860.00 | 6075.00 | 7290.00 | 8505.00 | 9720.00 | 10935.00 | 12150.00 | 12150.00 |
| 108 | 33661121 | Պարացետամոլ դ/հ 0.5գ №10 | | | | | 5040.00 | 6720.00 | 8400.00 | 10080.00 | 11760.00 | 13440.00 | 15120.00 | 16800.00 | 16800.00 |
| **Ընդամենը** | | | | | | | **210871.32** | **281161.76** | **351452.20** | **421742.64** | **492033.08** | **562323.52** | **632613.96** | **702904.40** | **702904.40** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳԵՌՈՒ

ՎԱՃԱՌՈՂ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ
ЕРЕВАН РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
LIMITED LIABILITY COMPANY
01222567
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»
"НАТАЛИ ФАРМ"
"NATALI FARM"